



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ

ԿԱՊԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ N 184-Ա

27 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2024թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԿԱՊԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՅՈԹԵՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 27-Ի ՀԻՆԳԵՐՈՐԴ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ և 62-րդ հոդվածներով և հաշվի առնելով Կապան համայնքի ղեկավարի առաջարկությունը, **Կապան համայնքի ավագանին որոշում է.**

Հաստատել Կապան համայնքի ավագանու յոթերորդ նստաշրջանի 2024 թվականի դեկտեմբերի 27-ի հինգերորդ նիստի օրակարգը՝

1. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Կապան համայնքում 2025 թվականի համար տեղական տուրքերի և վճարների տեսակներն ու դրույքաչափերը սահմանելու մասին

2. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Կապան համայնքի վարչական տարածքում շրջիկ առևտրի կետերին ներկայացվող պահանջները, պայմանները, ժամկետները, շրջիկ առևտրի իրականացման թույլատրելի վայրերը, դրանց տրամադրման (հատկացման) կարգը, պայմանները և գործունեության իրականացման ժամերը, ինչպես նաև վաճառվող ապրանքների կամ մատուցվող ծառայությունների չթույլատրվող տեսակները սահմանելու մասին

3. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Կապան համայնքի վարչական տարածքում շրջիկ առևտրի կետերը կամ տրանսպորտային միջոցները հատուկ տարածք տեղափոխելու, դրանք այնտեղ հաշվառելու կարգը և շրջիկ առևտրի կետերը կամ տրանսպորտային միջոցները հատուկ տարածք տեղափոխելու և պահպանման համար վճարների չափը սահմանելու մասին

4. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Կապան համայնքի համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին

5. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Կապանի համայնքապետարանի աշխատակազմի կառուցվածքը, աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին

6. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Կապան համայնքի սեփականություն համարվող գույքի գույքագրման փաստաթղթերում կատարված փոփոխությունները հաստատելու մասին

7. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Կապան համայնքի սեփականություն հանդիսացող գույքը՝ «Կապանի բոնգքամարտի մասնագիտացված դպրոց» համայնքային ոչ առևտրային կազմակերպությանը անհատույց սեփականության իրավունքով հանձնելու մասին

8. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Կապան համայնքի սեփականություն համարվող գույքի՝ 2024թ. գույքագրման փաստաթղթերը հաստատելու մասին

9. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Կապան համայնքի 2025 թվականի բյուջեն հաստատելու մասին

10. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Կապան համայնքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 27-ի N 147-Ս որոշման մեջ լրացումներ կատարելու մասին

11. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Կապան համայնքի Սյունիք գյուղում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող 0.82853 հա հողամասն աճուրդային կարգով օտարելու մասին

12. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Կապան համայնքի Կապան քաղաքի Մ. Պապյան փողոցի թիվ 24/26 հասցեում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող հողամասն աճուրդային կարգով օտարելու մասին

13. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Կապան համայնքի Սյունիք գյուղում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող 5.49304 հա հողամասն աճուրդային կարգով օտարելու մասին

14. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Կապան համայնքի Կապան քաղաքի «Վահանավանք» այգեգործական ընկերության թաղամաս թիվ 75/1 հասցեում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող հողամասն աճուրդային կարգով օտարելու մասին

15. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Կապան համայնքի Կապան քաղաքի գլխավոր հատակագծում փոփոխություն կատարելու, 0.0495 հա հողամասի նպատակային նշանակությունը փոխելու և աճուրդային կարգով օտարելու մասին

16. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Կապան համայնքի սեփականություն հանդիսացող, Կապան քաղաքի Ռ. Մելիքյան փողոց թիվ 6/15 հասցեում գտնվող հողամասը կառուցապատման իրավունքով օգտագործման տրամադրելու մասին

17. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Կապան համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերը կառուցապատման իրավունքով օգտագործման տրամադրելու մասին

18. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Կապան համայնքի Ձորաստան գյուղում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող հողամասը վարձակալության իրավունքով մրցույթով օգտագործման տրամադրելու մասին

19. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Կապան համայնքի Կապան քաղաքի Շահումյան փողոցի թիվ 32/33 հասցեում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող հողամասն ուղղակի վաճառքի միջոցով Արմեն Հայրապետի Ճուտիկյանին օտարելու մասին

20. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Կապան համայնքի Սյունիք բնակավայրի համակցված փաստաթղթում փոփոխություն կատարելու, 0.0975 հա հողամասի նպատակային նշանակությունը փոխելու և աճուրդային կարգով օտարելու մասին

21. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Կապան համայնքի ավագանու 2024 թվականի հոկտեմբերի 31-ի N 151-Ս որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին

22. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Կապան համայնքի ավագանու 2008 թվականի հունվարի 22-ի N 11-Ս որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին

23. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Կապան համայնքի սեփականություն համարվող հողերի կառավարման 2025 թվականի ծրագիրը հաստատելու մասին

24. Կապան համայնքում սոցիալական տներ ստեղծելու ծրագրին հավանություն տալու մասին

25. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Կապան համայնքի կոմունալ տնտեսության մեքենաների հավաքակալայնի աշխատանքային նախագծին համաձայնություն տալու մասին

26. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Կապան համայնքի ավագանու ութերորդ նստաշրջանի առաջին նիստի օրը որոշելու մասին

Կողմ (19)

ԳԵՎՈՐԳ ՓԱՐՍՅԱՆ

ԳՈՌԹԱԴԵՎՈՍՅԱՆ

ԶՈՐԱՅՐ ԳԱԼՍՅԱՆ

ՎԱՀԱՆ ՂԱԶԱՐՅԱՆ

ՅՈՒՐԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԱՆԺԵԼԱ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

ԱՐՇԱԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԱԼԵՆ ԱՐՄԵՆԻ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ՀԱՍՄԻԿ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ԱՐՏՅՈՄ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՍՈՆԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ԱՐՄԵՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՀԵՐՄԻՆԵ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

ԱՐԹՈՒՐ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ՆԱՐԻՆԵ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ԺԱՆՆԱ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ԱՐՄԻՆԵ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՎԱՐԴԱՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ՍՊԱՐՏԱԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

(Handwritten signatures on lines)

Դեմ (0)

Ձեռնպահ (0)

ՀԱՄԱՅՆՔԻ ԳԵՆԱԿԱՐ

ԳԵՎՈՐԳ ՓԱՐՍՅԱՆ

2024թ. դեկտեմբերի 27

ք. Կապան





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ԿԱՊԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ N 185-Ն

27 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2024թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԿԱՊԱՆ
ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ
ՎՃԱՐՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐՆ ՈՒ ԴՐՈՒՅՔԱԶԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 18-րդ, 19-րդ և 20-րդ կետերով, «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ, 9-րդ, 10-րդ, 11-րդ, 12-րդ և 13-րդ հոդվածներով, «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածով և հաշվի առնելով Կապան համայնքի ղեկավարի առաջարկությունը, **Կապան համայնքի ավագանին որոշում է.**

1. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Կապան համայնքում /այսուհետ՝ նաև Համայնք/ 2025 թվականի համար սահմանել տեղական տուրքերի և վճարների տեսակներն ու դրույքաչափերը՝ համաձայն Հավելված 1-ի:

2. 2025 թվականի համար Համայնքի վարչական տարածքում սահմանել հետևյալ տեղական վճարների տեսակներն ու դրույքաչափերը՝

1) Համայնքի կողմից աղբահանության վճար վճարողների համար աղբահանության աշխատանքները կազմակերպելու համար վճարները՝ համաձայն Հավելված 2-ի,

2) Համայնքային ենթակայության նախադպրոցական ուսումնական և արտադպրոցական դաստիարակության հաստատությունների ծառայություններից օգտվողների համար Համայնքի կողմից մատուցված ծառայությունների դիմաց վճարները՝ համաձայն Հավելված 3-ի:

3) Համայնքային ենթակայության կազմակերպությունների կողմից բնակչությանը մատուցվող ծառայությունների դիմաց վճարները՝ համաձայն Հավելված 4-ի:

3. Սահմանել, որ տեղական տուրք կամ վճար վճարողների գրանցամատյանները վարվում են էլեկտրոնային ձևով (համակարգչային ծրագրի կամ ինտերնետային կայքի տեսքով), իսկ դրանց բացակայության դեպքում՝ փաստաթղթային:

4. Սույն որոշման 1-ին հավելվածի իմաստով կիրառման գոտիները ներառում են հետևյալ

բնակավայրերը.

10 – 16 գոտիներ՝ Կապան քաղաքն իր թաղամասերով,

15-րդ գոտի՝ Սյունիք գյուղական բնակավայր,

17 - 20 գոտիներ՝ Ագարակ, Աղվանի, Աճաճան, Անտառաշատ, Առաջաձոր, Արծվանիկ, Բարգուշատ, Գեղանուշ, Գոմարան, Դավիթ Բեկ, Դիցմայրի, Եղեգ, Եղվարդ, Ըրկենանց, Խղրանց, Խորձոր, Ծավ, Կաղնուտ, Ձորաստան, Ճակատեն, Ներքին Խոտանան, Ներքին Հանդ, Նորաշենիկ, Շիկահող, Շիշկերտ, Շրվենանց, Չափնի, Սգնակ, Սրաշեն, Սևաքար, Վանեք, Վարդավանք, Վերին Խոտանան, Տանձավեր, Տավրուս, Ուժանիս, Օխտար գյուղական բնակավայրերը:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2025 թվականի հունվարի 1-ից:

Կողմ (19)՝

ԳԵՎՈՐԳ ՓԱՐՍՅԱՆ

ԳՈՌԹԱԴԵՎՈՍՅԱՆ

ԶՈՐԱՅՐ ԳԱԼՍՅԱՆ

ՎԱՀԱՆ ՂԱԶԱՐՅԱՆ

ՅՈՒՐԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԱՆԺԵԼԱ ԱԼԵԿՍԱՆՅԱՆ

ԱՐՇԱԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԱԼԵՆ ԱՐՄԵՆԻ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ՀԱՍՄԻԿ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ԱՐՏՅՈՄ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՍՈՆԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ԱՐՄԵՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՀԵՐՄԻՆԵ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

ԱՐԹՈՒՐ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ՆԱՐԻՆԵ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ԺԱՆՆԱ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ԱՐՄԻՆԵ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՎԱՐԴԱՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ՍՊԱՐՏԱԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Դեմ (0)

Ձեռնպահ (0)

ՀԱՄԱՅՆՔԻ ՉԵԿԱՎԱՐ

ԳԵՎՈՐԳ ՓԱՐՍՅԱՆ

2024թ. դեկտեմբերի 27

ք. Կապան





Հավելված 1
 Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի
 Կապան համայնքի ամսագանու
 27 դեկտեմբերի 2024թ
 N185-Ն որոշման

Աղյուսակ N 1

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Կապան համայնքում 2025 թվականի
 համար տեղական տուրքերի և վճարների տեսակներն ու դրույքաչափերը

ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ	Որոշմամբ սահմանված դրույքաչափը՝ այդ թվում բազային (<< դրամ)
<p>1. << օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ համայնքի վարչական տարածքում նոր շենքերի, շինությունների և ոչ հիմնական շինությունների շինարարության (տեղադրման) (բացառությամբ << օրենսդրությամբ սահմանված շինարարության թույլտվություն չպահանջող դեպքերի) թույլտվության համար.</p>	
<p>1) հիմնական շենքերի և շինությունների համար՝</p>	
<p>ա. մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական (ամառանոցային) տների համար՝ տասնհինգ հազար դրամ.</p>	15000
<p>բ. մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության շենքերի և շինությունների համար՝ տասնհինգ հազար դրամ.</p>	15000
<p>2) սույն կետի 1-ին ենթակետով չնախատեսված և Կառավարության սահմանած ցանկում ընդգրկված՝ սահմանամերձ բնակավայրերից փարբերվող բնակավայրերի փարածքում կառուցվող շենքերի և շինությունների (այդ թվում՝ հասարակական և արտադրական նշանակության շենքերի և շինությունների) համար՝</p>	
<p>ա. 200-ից 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ երեսուն հազար դրամ.</p>	
<p>- 10-12-րդ գոտում կառուցվող շենքերի և շինությունների համար – գործակից՝ 3,0</p>	90000
<p>- 13-16-րդ գոտում կառուցվող շենքերի և շինությունների համար – գործակից՝ 2,0</p>	60000
<p>- 17-20-րդ գոտում կառուցվող շենքերի և շինությունների համար – գործակից՝ 1,0</p>	30000
<p>Գյուղական բնակավայրերի համար կիրառել նաև 0,5 գործակից</p>	

<p>բ. 501-ից 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 100 հազար դրամ.</p> <p>- 10-12-րդ գոտում կառուցվող շենքերի և շինությունների համար – գործակից՝ 3,0</p> <p>- 13-16-րդ գոտում կառուցվող շենքերի և շինությունների համար – գործակից՝ 2,0</p> <p>- 17-20-րդ գոտում կառուցվող շենքերի և շինությունների համար – գործակից՝ 1,0</p> <p>Գյուղական բնակավայրերի համար կիրառել նաև 0,5 գործակից</p>	<p>300000</p> <p>200000</p> <p>100000</p>
<p>գ. 1001-ից 3000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 200 հազար դրամ.</p> <p>- 10-12-րդ գոտում կառուցվող շենքերի և շինությունների համար – գործակից՝ 3,0</p> <p>- 13-16-րդ գոտում կառուցվող շենքերի և շինությունների համար – գործակից՝ 2,0</p> <p>- 17-20-րդ գոտում կառուցվող շենքերի և շինությունների համար – գործակից՝ 1,0</p> <p>Գյուղական բնակավայրերի համար կիրառել նաև 0,5 գործակից</p>	<p>600000</p> <p>400000</p> <p>200000</p>
<p>դ. 3001 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ մեկ միլիոն դրամի և 3000 քառակուսի մետրը գերազանցող մինչև յուրաքանչյուր 3000 քառակուսի մետրի համար մեկ միլիոն դրամի հանրագումարի ու սույն ենթակետով սահմանված՝ շենքի (շինության) կառուցման վայրի գոտիականությանը համապատասխանող գոտիականության գործակցի արտադրյալը:</p>	
<p>3) սույն կետի 1-ին ենթակետով չնախատեսված և Կառավարության սահմանած ցանկում ընդգրկված՝ սահմանամերձ բնակավայրերի տարածքում կառուցվող շենքերի և շինությունների համար՝</p>	
<p>ա. 200-ից 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ երեսուն հազար դրամ.</p>	<p>30000</p>
<p>բ. 501-ից 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ հիսուն հազար դրամ.</p>	<p>50000</p>
<p>գ. 1001-ից 3000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ հիսուն հազար դրամ.</p>	<p>50000</p>
<p>դ. 3001 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ հարյուր հազար դրամ.</p>	<p>100000</p>
<p>4) ոչ հիմնական շենքերի և շինությունների համար՝</p>	
<p>ա. մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ հինգ հազար դրամ.</p> <p>- 10-12-րդ գոտում կառուցվող շենքերի և շինությունների համար – գործակից՝ 3,0</p> <p>- 13-16-րդ գոտում կառուցվող շենքերի և շինությունների համար –</p>	<p>15000</p> <p>10000</p>

<p>գործակից՝ 2,0 - 17-20-րդ գոտում կառուցվող շենքերի և շինությունների համար – գործակից՝ 1,0 Գյուղական բնակավայրերի համար կիրառել նաև 0,5 գործակից</p>	<p>5000</p>
<p>բ. 20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 10 հազար դրամ. - 10-12-րդ գոտում կառուցվող շենքերի և շինությունների համար – գործակից՝ 3,0 - 13-16-րդ գոտում կառուցվող շենքերի և շինությունների համար – գործակից՝ 2,0 - 17-20-րդ գոտում կառուցվող շենքերի և շինությունների համար – գործակից՝ 1,0 Գյուղական բնակավայրերի համար կիրառել նաև 0,5 գործակից</p>	<p>30000 20000 10000</p>
<p>2. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ համայնքի վարչական տարածքում նոր շենքերի և շինությունների (բացառությամբ Կառավարության սահմանած ցանկում ընդգրկված՝ սահմանամերձ բնակավայրերի տարածքում կառուցվող շենքերի և շինությունների) շինարարության թույլտվության ժամկետների երկարաձգման յուրաքանչյուր տարվա (այդ թվում՝ ոչ ամբողջական) համար՝ 1) այլ շենքերի և շինությունների (այդ թվում՝ հասարակական և արտադրական նշանակության շենքերի և շինությունների) շինարարության թույլտվության ժամկետների երկարաձգման յուրաքանչյուր տարվա (այդ թվում՝ ոչ ամբողջական) համար՝ 60 հազար դրամ ա. 200-ից 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ վաթսուն հազար դրամ. - 10-12-րդ գոտում կառուցվող շենքերի և շինությունների համար – գործակից՝ 3,0 - 13-16-րդ գոտում կառուցվող շենքերի և շինությունների համար – գործակից՝ 2,0 - 17-20-րդ գոտում կառուցվող շենքերի և շինությունների համար – գործակից՝ 1,0 Գյուղական բնակավայրերի համար կիրառել նաև 0,5 գործակից</p>	<p>180000 120000 60000</p>
<p>բ. 501-ից 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 200 հազար դրամ. - 10-12-րդ գոտում կառուցվող շենքերի և շինությունների համար – գործակից՝ 3,0 - 13-16-րդ գոտում կառուցվող շենքերի և շինությունների համար – գործակից՝ 2,0 - 17-20-րդ գոտում կառուցվող շենքերի և շինությունների համար – գործակից՝ 1,0</p>	<p>600000 400000 200000</p>

<p>Գյուղական բնակավայրերի համար կիրառել նաև 0,5 գործակից</p>	
<p>գ. 1001-ից 3000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 400 հազար դրամ. - 10-12-րդ գոտում կառուցվող շենքերի և շինությունների համար – գործակից՝ 3,0 - 13-16-րդ գոտում կառուցվող շենքերի և շինությունների համար – գործակից՝ 2,0 - 17-20-րդ գոտում կառուցվող շենքերի և շինությունների համար – գործակից՝ 1,0</p> <p>Գյուղական բնակավայրերի համար կիրառել նաև 0,5 գործակից</p>	<p>1200000 800000 400000</p>
<p>դ. 3001 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ երկու միլիոն դրամի և 3000 քառակուսի մետրը գերազանցող մինչև յուրաքանչյուր 3000 քառակուսի մետրի համար երկու միլիոն դրամի հանրագումարի ու սույն կետով սահմանված՝ շենքի կամ շինության կառուցման վայրի գոտիականությանը համապատասխանող գոտիականության գործակցի արտադրյալը:</p>	
<p>3. Համայնքի վարչական տարածքում գոյություն ունեցող շենքերի և շինությունների վերակառուցման, վերականգնման, ուժեղացման, արդիականացման և բարեկարգման աշխատանքների (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված շինարարության թույլտվություն չպահանջվող դեպքերի) թույլտվության համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝</p>	
<p>1) չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն՝ երեք հազար դրամ.</p>	<p>3000</p>
<p>2) բացի շենքերի և շինությունների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից, նախատեսվում է նաև կցակառույցների, վերնակառույցների, շենքի տրամաչափային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, և, բացի սույն կետի 1-ին ենթակետով սահմանված դրույքաչափից, կիրառվում են նաև նոր շինարարության համար սույն հավելվածի 1-ին կետի 1-ին ենթակետով սահմանված նորմերը և դրույքաչափերը՝ շենքերի և շինությունների ընդհանուր մակերեսի ավելացման կամ շենքերի գործառական նշանակության փոփոխության մասով,</p>	
<p>3) նախատեսվում է միայն կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝</p>	

<p>ստորգետնյա) շինարարություն կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա, այն համարվում է նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար սույն հավելվածի 1-ին կետի 1-ին ենթակետով սահմանված նորմերը և դրույքաչափերը:</p>	
<p>4. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների և քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված քանդման թույլտվություն չպահանջվող դեպքերի) թույլտվության համար՝ հինգ հազար դրամ.</p>	5000
<p>5. Համայնքի վարչական տարածքում օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված պահանջները բավարարող լցավորման յուրաքանչյուր կայանում հեղուկ վառելիքի վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ երկու հարյուր հազար դրամ – գործակից՝ 1,5</p>	300000
<p>6. Համայնքի վարչական տարածքում օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված պահանջները բավարարող լցավորման յուրաքանչյուր կայանում սեղմված բնական գազի վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ երկու հարյուր հազար դրամ – գործակից՝ 1,5</p>	300000
<p>7. Համայնքի վարչական տարածքում օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված պահանջները բավարարող լցավորման յուրաքանչյուր կայանում հեղուկացված նավթային կամ ածխաջրածնային գազերի վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ երկու հարյուր հազար դրամ – գործակից՝ 1,5</p>	300000
<p>8. Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած ցանկում ընդգրկված սահմանամերձ և բարձրլեռնային բնակավայրերի տարածքում օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված պահանջները բավարարող լցավորման յուրաքանչյուր կայանում հեղուկ վառելիքի վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ հարյուր հազար դրամ – գործակից՝ 1,5</p>	150000
<p>9. Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած ցանկում ընդգրկված սահմանամերձ և բարձրլեռնային բնակավայրերի տարածքում օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված պահանջները բավարարող լցավորման յուրաքանչյուր կայանում սեղմված բնական գազի վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ հարյուր հազար դրամ – գործակից՝ 1,5</p>	150000
<p>10. Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած ցանկում ընդգրկված սահմանամերձ և բարձրլեռնային բնակավայրերի տարածքում օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված պահանջները բավարարող լցավորման յուրաքանչյուր կայանում հեղուկացված նավթային կամ ածխաջրածնային գազերի վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ հարյուր հազար դրամ – գործակից՝ 1,5</p>	150000

<p>11. Համայնքի վարչական տարածքում գտնվող խանութներում, կրպակներում, հեղուկ վառելիքի կամ սեղմված բնական կամ հեղուկացված նավթային կամ ածխաջրածնային գազերի մանրածախ առևտրի կետերում, ավտոլվացման կետերում, ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման և նորոգման ծառայության օբյեկտներում տնտեսավարողի գործունեության յուրաքանչյուր վայրում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ վաթսուն հազար դրամ՝</p>	<p>60000</p>
<p>12. Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած ցանկում ընդգրկված սահմանամերձ և բարձրլեռնային բնակավայրերի տարածքում գտնվող խանութներում, կրպակներում, հեղուկ վառելիքի կամ սեղմված բնական կամ հեղուկացված նավթային կամ ածխաջրածնային գազերի մանրածախ առևտրի կետերում, ավտոլվացման կետերում, ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման և նորոգման ծառայության օբյեկտներում տնտեսավարողի գործունեության յուրաքանչյուր վայրում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ քսան հազար դրամ.</p>	<p>20000</p>
<p>13. Համայնքի վարչական տարածքում թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի որոշակի վայրում մանրածախ առք ու վաճառք իրականացնելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ հիսուն հազար դրամ – գործակից՝ 1,5</p>	<p>75000</p>
<p>14. Համայնքի վարչական տարածքում ոգելից և ալկոհոլային խմիչքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝</p>	
<p>1) մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ մինչև տասը հազար մեկ դրամ. ա. Կապան համայնքի Կապան քաղաքում – գործակից՝ 1,0 բ. Կապան քաղաքի Վաչագան, Բաղաբուրջ, Բարաբաթում, Բեխ, Կավարտ, Արփիկ, Լենհանքեր, Աշոտավան, Շղարշիկ թաղամասերում գործակից՝ 0,5 գ. գյուղական բնակավայրերում – գործակից՝ 0,3</p>	<p>10000 5000 3000</p>
<p>2) 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ տասը հազար մեկ դրամից մինչև տասներեք հազար մեկ դրամ. ա. Կապան համայնքի Կապան քաղաքում – գործակից՝ 1,5 բ. Կապան քաղաքի Վաչագան, Բաղաբուրջ, Բարաբաթում, Բեխ, Կավարտ, Արփիկ, Լենհանքեր, Աշոտավան, Շղարշիկ</p>	<p>12000 18000</p>

թաղամասերում – գործակից՝ 0,5	6000
գ. գյուղական բնակավայրերում – գործակից՝ 0,3	3600
3) 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ տասներեք հազար մեկ դրամից մինչև քսան հազար մեկ դրամ.	18000
ա. Կապան համայնքի Կապան քաղաքում – գործակից՝ 1,5	27000
բ. Կապան քաղաքի Վաչագան, Բաղաբուրջ, Բարաբաթում, Բեխ, Կավարտ, Արփիկ, Լենհանքեր, Աշոտավան, Շղարշիկ թաղամասերում – գործակից՝ 0,5	9000
գ. գյուղական բնակավայրերում – գործակից՝ 0,3	5400
4) 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ քսան հազար մեկ դրամից մինչև քսանհինգ հազար մեկ դրամ.	24000
ա. Կապան համայնքի Կապան քաղաքում – գործակից՝ 1,5	36000
բ. Կապան քաղաքի Վաչագան, Բաղաբուրջ, Բարաբաթում, Բեխ, Կավարտ, Արփիկ, Լենհանքեր, Աշոտավան, Շղարշիկ թաղամասերում – գործակից՝ 0,5	12000
գ. գյուղական բնակավայրերում – գործակից՝ 0,3	7200
5) 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ քսանհինգ հազար մեկ դրամից մինչև քառասունհինգ հազար մեկ դրամ.	40000
ա. Կապան համայնքի Կապան քաղաքում – գործակից՝ 1,5	60000
բ. Կապան քաղաքի Վաչագան, Բաղաբուրջ, Բարաբաթում, Բեխ, Կավարտ, Արփիկ, Լենհանքեր, Աշոտավան, Շղարշիկ թաղամասերում – գործակից՝ 0,5	20000
գ. գյուղական բնակավայրերում – գործակից՝ 0,3	12000
6) 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ քառասունհինգ հազար մեկ դրամից մինչև հարյուր մեկ հազար դրամ.	100000
ա. Կապան համայնքի Կապան քաղաքում – գործակից՝ 1,5	150000
բ. Կապան քաղաքի Վաչագան, Բաղաբուրջ, Բարաբաթում, Բեխ, Կավարտ, Արփիկ, Լենհանքեր, Աշոտավան, Շղարշիկ թաղամասերում – գործակից՝ 0,5	50000
գ. գյուղական բնակավայրերում – գործակից՝ 0,3	30000
15. Համայնքի վարչական տարածքում օրենքով սահմանված սահմանափակումներին համապատասխան ծխախոտային արտադրատեսակների կամ ծխախոտային արտադրատեսակների	